

ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԱՅ ՎԵՐԱՓՈԽՈՒՄԸ



ԿԿՈՒ

Մանկապատանեկան Թերթիկ

ՕԳՈՍՏՈՍ Գ - 2024
Թիւ - 30 -



Թիւր պատրաստեց՝
ՓԱԲՈՒ ԳՈՍՍՊԵՆԱՆ-ՎԱՐՈՒՊԵՏԵՆԱՆ
Նկարագարդեց՝
ՌԱՅՅԻՒՆ ԲԷՇՎՇԵՆԱՆ

Աստուածածնայ վերափոխման տօնը հայ եկեղեցւոյ հինգ գլխաւոր տաղաւար տօներէն մէկն է: Հայերը այս տօնը կը տօնեն Օգոստոս 15-ի մօտաւորտ Կիրակին:

Ըստ հայկական եկեղեցւոյ, երբ Մարիամ կը մահանայ, Բարթողիմէոս առաքեալ ներկայ չըլլար թաղման, վերադառնալէն ետք կ'ուզէ տեսնել Յիսուսի մօր դէմքը: Դագաղը կը բանան եւ կը տեսնեն, որ Մարիամի մարմինը չկայ, այսպիսով կը յայտարարուի Տիրոջ կողմէ Մարիամին պարգեւած մեծամեծ շնորհներուն մասին, որոնցմէ մէկն է վերափոխումը, այսինքն՝ մահէն ետք հոգիով եւ մարմնով երկինք բարձրանալը:

Աստուածածնայ այս տօնին Ս. Պատարագէն ետք, հայ եկեղեցին կը կատարէ խաղողօրհնէք: Առաջին բերքի խաղողները կ'օրհնուին, որպէս երկրին



պարգեւած առաջին պտուղները: Խաղողի ողկոյզը ամենէն օրհնուած պտուղն է:

Հայ եկեղեցւոյ սրբազան արարողութիւններէն մէկն է նաեւ մատաղը:

Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայրապետի օրերէն ի վեր մատաղը Առաքելական եկեղեցւոյ մէջ ընդունուած սովորութիւն մըն է: Սուրբերու տօներուն, ինչպէս Ս. Աստուածածնայ տօնին, Պատարագէն ետք մատաղ կ'օրհնեն եւ այդ մատաղով «Հարիսէ» անունով ճաշ մը կը պատրաստեն ու կը բաժնեն բոլոր ներկայ հաւատացեալներուն, որպէսզի Ս. Պատարագի հաղորդութենէն ետք, անոնք անմիջապէս սովորական կերակուր չուտեն, այլ՝ մատաղին օրհնուած միսը:

Մատաղին գլխաւոր նիւթերն են՝ կենդանիի միսն ու աղը:




Խառնուած տառերը ճշդելով կազմէ՛ բառը:


- | | |
|------------|--------------|
| րաակրՍբպտե | (Սրբապատկեր) |
| նուկրաՈթտ | (Որթատունկ) |
| իինԳ | (Գինի) |
| բեԳթմ | (Գմբեթ) |
| կնուև | (Խունկ) |



Փորձէ՛ հաշուել երկրաչափական ձևերը, ետքը ամբողջացո՛ւր տուփիկները:



Կրնա՞ս գտնել ելքի ճամբան:



Կրնա՞ս գտնել տասը տարբերութիւններ երկու պատկերներուն միջեւ:





ԱՂՈՒԷՍՆ ՈՒ ԽԱՂՈՂԸ

Անօթի աղուես մը խաղողի որթատունկ մը կը տեսնէ, անոր ողկոյզներուն վրայ կախուելով կ'ուզէ դունչը հասցնել պտուղին, բայց չի կրնար: Յուսահատ ինքնիրեն կ'ըսէ. «Դեռ խակ է»:



ԳԻՒՂԱՅԻՆ ՈՒ ԻՐ ՈՐԴԻՆԵՐԸ

Աշխատասեր հողագործ մը ծոյլ որդիներ ուներ: Ան մահամերձ էր: Իր մահուան օրը հողագործը բոլորը հաւաքելով ըսաւ անոնց. «Սիրելի՛ գաւակներս, մեր պարտեզին մէջ գանձ մը պահած եմ: Եթէ աշխատիք՝ պիտի գտնէք զայն ու հարստանաք»: Հագիւ հայրը մահացաւ, գաւակները շուտով բահերը առին եւ ամբողջ հողը լաւ մը փորեցին: Ճիշդ է, որ անոնք գանձ չգտան, բայց այգին առատ բերք տուաւ եւ անոնք հարստացան:

ԽԱՂՈՂԻ ՄԱՍԻՆ

Խաղողը աշխարհի ամենէն բազմատեսակ պտուղն է: Խաղողի 8000 տեսակ գոյութիւն ունի: Խաղողագործութիւնը Հայաստանի մէջ շատ հին ծագում ունի: Քրիստոսէ առաջ 19-րդ դարերուն ուրարտացիները ունեցած են զարգացած խաղողագործութիւն, այդ մասին կը վկայեն սեպագիր արձանագրութիւնները: Խաղողը Հայաստանի խորհրդանշներէն մէկն է:

